Շարադրություն

Թեմա՝ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Անուն, հայրանուն, ազգանուն՝ **Հրաչյա Ռուբենի Գրիգորյան**
Դպրոց՝ Ք. Երևան Նոր Նորքի 5-րդ զանգվածի Արտեմ Միկոյանի N166 դպրոցի 7ա դասարան
Բջջային՝ 094 536567
099 696261

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԸ

Իմ սուրբ հայրենիք սրտիս մեջ ես…

Մարդու կյանքում կան նվիրական զգացմունքներ, որոնք երբեք և ոչնչով չեն մարում ու չեն փոխվում.դրանք են մայրական սերն ու սերը հայրենիքի հանդեպ: Ամեն մեկս պետք է իմանանք մեր հայրենիքի պատմությունը, հիշենք նրա անցյալը, ապրենք ներկայով ու կերտենք ապագան: Մենք Ծովից ծով Հայաստան ենք ունեցել՝ ծաղկած ու հզոր մի երկիր: Բայց հարևանների նախանձն ավելի ուժեղ է գտնվել և դարերի ընթացքում մասնատվել ու ջլատվել է մեր գեղեցիկ օրրանը, դարձել մի բուռ ու մեր ազգը ցիրուցան է եղել, սփռվել աշխարհով մեկ: Բայց հայը մնացել է հայ՝ իր գիր ու գրականությամբ, իր արվեստով ու արհեստով, իր շինարար ու ստեղծագործող էությամբ: Դարերի խորքից է գալիս հայը: Հին է մեր ժողովուրդը, մեր քարերից ու ձորերից էլ հին ու մեր մեր ժայռերի ու լեռների նման էլ՝ ամրակուռ ու հարատև: Երկար ու խորդուբորդ է եղել հայի ճամփան. կանաչի փոխարեն անապատի ավազով պատված: Արյունով է կերտվել մեր պատմությունը, մաքառումներով է շունչ տվել ամեն մի քարի ու ծառի: Բայց ապրել ենք մենք, ապրել ու արարել, հերոսացել Մեծ Հայրենականի բովում, դիմակայել բնության արհավիրքների՝ Մեծ երաշտին, որին հետևեց արնախում հարևանի կողմից վայրագությունները Սումգայիթում, Բաքվում: Տիրած ամենաթողությունից հետո հարևան ժողովրդի խաժամուժը որոշեց <<մաքրել իր տարածքը...>>: Ու նորից կանգնեց հայը, կանգնեց պաշտպանելու իր հողը, իր մորն ու զավակին, իր սրբություններն ու պատմությունը: Անհավասար էր մարտը...

Արդյունքում ընդհատվեցին բազում կյանքեր, դեռ նոր կյանք մտած, բայց արդեն հերոսաբար ընկած պատանիներ, որբացած մանուկներ ու որդեկորույս մայրեր, հաշմված մարմիններ ու խեղված հոգիներ: Շատ էին և զրկանքները. ցուրտ ու մութ բնակարաններ, ապրուստի ու հատկապես հացի խնդիր:

Բայց հաղթեց հայը, հաղթեց և ա՛յս անգամ, հաղթեց իր անսասան կամքի, իր բացառիկ քաջության և այն սիրո շնորհիվ, որ հային դարեր շարունակ հայ է պահել:

Եվ այս ամենից ծնվեց Հայաստանի անկախ Հանրապետությունը ու Արցախը: Հայը կրկին շենացրեց ու կառուցեց, բայց նրան, ինչպես միշտ, վիճակված չէր վայելելու իր իսկ ստեղծած դրախտավայրը (պատմությունը կրկնվելու սովորություն ունի):

Արնախում թշնամին հարձակվեց չքնաղ Արցախի վրա: Անհավասար էր մարտը՝ բոլոր առումներով, բայց քաջ հայորդիները առանց վարանելու գնացին օգնելու սահմանին կանգնած անձնազոհ պատանիներին, գնացին գիտակցելով, թե ինչի են գնում, գիտակցելով գնացին դեպի հերոսական անմահություն... Սակայն արնախում թշնամին բազմաթիվ աջակիցներ ուներ...

Եվ կյանքում առաջին անգամ հայն ընկրկեց թշնամու առաջ՝ թողնելով արնախումին դեպի իր պապերի սուրբ հողը...

Մենք դեռ կվերափոխենք թվացյալ պարտությունը փառավոր հաղթանակի, չէ՞ որ մենք ծիլն ենք այն հասկի, որ մեր պապերն են ցանել, և զարկն ենք այն բազկի, որով նրանք են հաղթել ու արարել…